ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
24 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 01-Ն
ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 01 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջով, ***համայնքի ավագանին որոշում է՝***

Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի 2022 թվականի հունվարի 24-ի ավագանու թիվ 01 հերթական նիստի օրակարգը հետևյալ բովանդակությամբ՝

1/ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման մասին,

2/ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին,

3/ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի 2022 թվականի վարձատրության չափը հաստատելու մասին,

4 / ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի աշխատակազմի 2022 թվականի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 17.12.2021 թ-իթիվ 82-Նորոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին,

5/ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ՀՈԱԿ) կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 26-ի թիվ 11-Ն, 2021 թվականի մարտի 5-ի թիվ 16-Ն և 2021 թվականի ապրիլի 14-ի թիվ 29-Ն որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին,

6/ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի տեղական տուքերի և վճարների 2022 թվականի տեսակներն ու դրույքաչափերը հաստատելու մասին,

7/ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ) հաստատելու մասին,

8/ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին,

9/ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքիՆորաշեն, Գեղաղիր, Հնաբերդ, Գեղաձոր, Բերքառատ, Ծաղկահովիտ, Վարդաբլուր, Գեղարոտ, Ծիլքար և Լեռնապար բնակավայրերը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արագածոտն-11 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերը հաստատելու մասին,

10/ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը վարձակալության տրամադրելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին,

11/ Քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի գործառնական նշանակությունը փոխելու մասին:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏՈՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԳԱՐԵԳԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻՇԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄԵՎԱԿ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԷԴԳԱՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՉԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆՈՐԱՀԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ